

Թիւ 26289
Մարտ 1, 1979

Արժանաշնորհ
Տ. Գարեգին Քհնյ. Գասպարեան
Հովիւ Ուեսթչէսթըրի Հայց. Եկեղեցւոյ
Նախագահ Եփական Խորհուրդի
Գրէսթվուտ.

Սիրելի Տէր Գարեգին,

Ստացած ենք Փետրուար 20, 1979 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 11ին գումարուած համայնքիդ Եփական Ժողովին մէջ կատարուած է Եփական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Եփական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել Եփական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Եփական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Կարօ Պաշեան
Զաւէն Ատուրեան
Ժան Վոլոնոնեան
Էնն Պօղոսեան
Օհան Պաս